ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018թ ապրիլի 25-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ «Ա» դասարանի համատեղ ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները և աշակերտները, դասղեկ Լ. Ազարյանը և տնօրեն Ն. Բաբայանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. «Հայ մեծերը» շարքից «Միքայել Արամյանց» միջոցառման կազմակերպման հարցը:
2. Գալիք ուսումնական տարվան պատրաստվելու, աշակերտական համազգեստի, կոշիկների անհրաժեշտ նմուշներ ձեռք բերելու հարցը:
3. Աշակերտների կարգապահության, ուսման առաջադիմության հարցը:

1. **Լսեցին.**- «Հայ մեծերը» շարքից «Միքայել Արամյանց» միջոցառման կազմակերպման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Լ. Ազարյանը: Նա նշեց, որ տնօրենության կողմից առաջարկ է եղել «Հայ մեծերը» շարքից միջոցառում կազմակերպել 8-րդ «Ա» դասարանում, որի համար անհրաժեշտ է ծնողների և աշակերտների մասնակցությունն ու աջակցությունը:

Որոշեցին.- Առաջիկա շաբաթվա ընթացքում հաճախ լինել դպրոցում, օգնել դասղեկին բեմի ձևավորման, հագուստի և կազմակերպչական այլ հարցերում:

2. **Լսեցին.** -Գալիք ուսումնական տարվան պատրաստվելու, աշակերտական համազգեստի, կոշիկների անհրաժեշտ նմուշներ ձեռք բերելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Լուսինե Ազարյանը: Նա նշեց, որ իրենց աշակերտների մի մասը ունեն նոր համազգեստ ձեռք բերելու խնդիր. դրանք փոքրացել են և պետք է փոխարինվեն նորերով: Նա խնդրեց ծնողերին կազմակերպել նոր, անհրաժեշտ նմուշի համազգեստներ ձեռք բերելու գործընթացը:

Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անժելա Գինոսյանը իր ելույթում նշեց, որ իրեն են դիմել տարբեր դասարանների մի շարք ծնողներ, որոնք խնդրել են կազմակերպել մասնագետների հանդիպումը և համազգեստի չափագրման գործընթացը:

Տնօրեն Նաիրա Բաբայանը նշեց, որ մեր դպրոցի համար ձեռքբերում է համազգեստ կրելը, որը կարգապահության, դպրոցականի վայել տեսքի, կեցվածքի, պահվածքի կարևոր գործոններից է: Շատ կարևոր է նաև ճիշտ, ոչ բարձրակրունկ, հարմարավետ

կոշիկների ընտրությունը հատկապես աղջիկների համար: Տղաները պետք է ձեռք բերեն սպիտակ, առանց ավելորդ աքսեսուարների վերնաշապիկներ:

Ելույթ ունեցավ 8-րդ դասարանի ծնող Արմինե Գուլամերյանը: Նա շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրենին այդ կարևոր աշխատանքի կազմակերպման համար՝ նշելով ,որ ծնողները համազգեստի շնորհիվ ազատվել են անընդհատ նոր հագուստներ ձեռք բերելու ավելորդ հոգսից, ինչպես նաև աշակերտների միջև ավելորդ մրցակցությունից, որը խանգարում է սովորելուն: Դպրոցում հաստատված կարգ ու կանոնի, աշակերտների՝ ուսման նկատմամբ ունեցած հետաքրքրությունների, ուսման մեջ ձեռք բերած հաջողությունների մեջ համազգեստը շատ կարևոր դեր ունի:

Որոշեցին.- Մինչև ուստարվա ավարտը կազմակերպել համազգեստի չափազրման, ձեռքբերման աշխատանքները՝ տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի հսկողությամբ և մասնակցությամբ:

3. Լսեցին. Աշակերտների կարգապահության, ուսման առաջադիմության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Լուսիե Ազարյանը: Նա նշեց, որ ընդհանուր առմամբ երեխաները կարգապահ են, խնդիրներ կան ուսման առաջադիմության հետ կապված, որոնքն ծնողների հետևողական և ուշադիր լինելու դեպքում կհարթվեն՝ արդյունքում ապահովելով բարձր առաջադիմություն: Դասղեկը ծնողներին հորդորեց ամեն օր ստուգել երեխաների դասապատրաստումները, դասագրքերն ու տետրերը, միշտ կապ պահել ուսուցիչների և դասղեկի հետ, անել ամեն ինչ, որ երեխաները չբացակայեն դասերից և ավելի լրջորեն պատրաստվեն, քանի որ առաջիկայում ունեն կիսամյակային ամփոփիչ գրավորներ:

Որոշեցին.
Լինել ավելի հետևողական և ուշադիր, որպեսզի ապահովեն բարձր առաջադիմություն:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Գալուստ Գալստյան
Քարտուղար՝ Լիլիթ Թադևոսյան